ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/160/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 15 հուլիսի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի հուլիսի 15-ին, քննության առնելով «Միասնական Հայրենիք» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) նախագահ Միեր Տերտերյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.10-րդ հոդվածով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/160/2025 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված Հանձնաժողովի լիազորությունների շրջանակներում, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ Սահմանադրական օրենք) 28.1-ին հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերով սահմանված պահանջների պահպանվածության ստուգման արդյունքում հայտնաբերել է, որ Կուսակցության ղեկավար մարմնի հայտարարատու պաշտոնատար անձանց տվյալները Հանձնաժողովի էլեկտրոնային համակարգում բացակայում են:

1.2 Հանձնաժողովը 2025 թվականի մայիսի 16-ի N01/2031/33-2025 գրությամբ Կուսակցությանը ծանուցել է, որ անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների վերաբերյալ տվյալները, իսկ դրանից հետո Կուսակցության ղեկավար կազմում փոփոխություններ կատարված լինելու դեպքում հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին տվյալներ (այսուհետ՝ հայտարարատու պաշտոնատար անձանց ռեեստր) Կուսակցության յուրաքանչյուր հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնի նշանակելու կամ ազատելու համար հիմք հանդիսացող համապատասխան ակտի պատճենի հետ միասին:

Նույն գրությամբ Կուսակցության նախագահ Միեր Տերտերյանը ծանուցվել է, որ վերոնշյալ տեղեկությունները սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում ծանուցումը ստանալուց հետո՝ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը 14:00-ին, հրավիրվում է Հանձնաժողով՝ իր մասնակցությամբ Օրենսգրքի 189.10-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներով արձանագրություն կազմելու համար, իսկ 10-րդ աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին՝ առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի նյութերի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու համար: Նշված փոստային ծանուցումը Հանձնաժողով է վերադարձվել 2025 թվականի հունիսի 20-ին *չպահանջված* նշումով (հիմք՝ LO127932744AM փոստային հետադարձ առաքանին, ետ վերադարձ՝ CN 15):

1.3 2025 թվականի հունիսի 10-ին նշված ծանուցումը՝ N 01/2415-2025 գրությամբ, ուղարկվել է Երևանի քաղաքապետին և միաժամանակ տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային (www.azdarar.am) կայքում:

1.4 2025 թվականի հունիսի 23-ին պատշաճ ծանուցված Կուսակցության նախագահ Միեր Տերտերյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ 108/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.10-րդ հոդվածով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.5 Հանձնաժողովը 2025 թվականի հուլիսի 9-ի N01/2726-2025 գրությամբ տեղեկացրել է Մեր Տերտերյանին գործի քննությունը 2025 թվականի հուլիսի 15-ին՝ ժամը 15:00-ին տեղափոխելու մասին: Վերջինս հաստատել է ծանուցումը ստանալու փաստը՝ Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային հասցեին գրություն ուղարկելու միջոցով:

1.6 2025 թվականի հուլիսի 15-ին՝ պատշաճ ծանուցված Մեր Տերտերյանի ներկայությամբ տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Մեր Տերտերյանի կողմից 2025 թվականի հունիսի 27-ին Հանձնաժողովը ստացել է գրություն, ըստ որի՝ «(…) Օրերս հեռախոսազանգով՝ հանձնաժողովի աշխատակցի կողմից տեղեկացվել եմ «Միասնական հայրենիք» կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց ռեեստրը լրացնելու անհրաժեշտության մասին:

Կուսակցությունը հիմնադրվել է 2021թ.-ի մայիսի վերջերին, հիմնադրման բազմաթիվ նպատակներից մեկն էլ եղել է 2021 թ-ի ընտրություններին մասնակցելը եւ այլ կուսակցությունների հետ համախմբվելը, միասնական ուժ դառնալը: Ընտրություններին մասնակցել և գրանցել ենք բավականին ցածր արդյունք, ինչից հետո կուսակցության անդամները, խորհրդի անդամները կուսակցությունում փաստացի դադարել են որեւէ գործառույթ իրականացնելը, նույնիսկ որպես կուսակցության նախագահ պարզ շփում ու կապ չունեմ կուսակցության բազմաթիվ անդամների, խորհրդի անդամների եւ ղեկավար կազմի հետ: Խորհրդի անդամները 2021թ.-ի տարեվերջից փաստացի դադարել են կուսակցությունում որեւէ գործունեություն ծավալելը:

Ներկայումս խորհրդի անդամներից տեղեկություններ ունեմ միայն Լուսինե Ավագյանի մասին, ընդ որում Լուսինե Ավագյանը դեռեւս 2022 թ-ին ներկայացրել է դիմում խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու մասին՝ պայմանավորված այն հանգամանքով, որ վճռաբեկ դատարանի թեկնածության հայտ էր ներկայացրել և այդ պայմաններում չէր կարող ծավալել քաղաքական գործունեություն:

Վերոգրյալով պայմանավորված «Միասնական հայրենիք» կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց ռեեստրը լրացնել կարող եմ ես՝ Մեր Հայկի Տերտերյանս, խորհրդի մնացած անդամները դեռեւս 2021թ-ի վերջերից փաստացի դադարեցրել են իրենց որեւէ գործունեությունը կուսակցությունում, նրանց հետ որեւէ առնչություն չունեմ, նրանց լիազորությունների փաստացի դադարեցումը չեմ ձևակերպել, զուտ ձեւակերպման ընթացակարգին ծանոթ չլինելու հանգամանքով պայմանավորված:

Այլ տեղեկություններ ունենալու դեպքում լրացուցիչ կտեղեկացնեմ, միաժամանակ հայտնում եմ, որ Մեր Հայկի Տերտերյանս պատրաստ եմ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լրացնել անհրաժեշտ փաստաթղթեր, պարզապես իրազեկված չլինելով գործընթացից ունեմ խորհրդատվություն ստանալու անհրաժեշտություն: (…)»:

Գործի քննության ընթացքում Մեր Տերտերյանը հայտնեց, որ Կուսակցությունը ստեղծվել է 2020 թվականի քառասունչորս օրյա պատերազմից հետո՝ 2021 թվականի Հայաստանի խորհրդարանական ընտրություններին մասնակցելու նպատակով: Ընտրություններին Կուսակցությունը ստացել է մոտ 1000 ձայն, որից հետո Կուսակցությունը փաստացի դադարեցրել է գործունեությունը, մասնավորապես խորհրդի նիստեր չեն գումարվել: Կուսակցության խորհրդի անդամները տարբեր ժամանակներում դիմումներ են ներկայացրել խորհրդի անդամությունը դադարեցնելու մասին, որոնք, սակայն, սահմանված կարգով չեն գրանցվել և դրանց ընթացք չի տրվել: Նշեց նաև, որ հետագայում Կուսակցությունը հնարավոր է շարունակի իր գործունեությունը, այդ իսկ պատճառով այն չի լուծարվել, բայց կապը Կուսակցության նախկին անդամների հետ խզված է: Մեր Տերտերյանն ավելացրեց, որ գիտակցում է օրենքի պահանջը և պատրաստ է այն կատարել:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/160/2025 վարչական վարույթում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ Միեր Տերտերյանը 2019 թվականի սեպտեմբերի 22-ից հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավարը՝ նախագահը:

3.2 Կուսակցության նախագահ Միեր Տերտերյանը Հանձնաժողովի օրինական գործունեության համար անհրաժեշտ տեղեկությունները սահմանված ժամկետում չի ներկայացրել Հանձնաժողով:

3.3 Մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրը Կուսակցության կողմից Հանձնաժողով չի ներկայացվել Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց ռեեստրը:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամները (այսուհետ նաև՝ հայտարարատու պաշտոնատար անձինք) պարտավոր են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իրենց գույքի և եկամուտների հայտարարագիր, որի ձևանմուշը և հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

4.2 Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են պաշտոնը ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրեր:

4.3 Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կուսակցությունն իր ղեկավար մարմնում հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին եռօրյա ժամկետում ծանուցում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ տրամադրելով համապատասխան ակտի պատճենը:

4.4 Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը վարում է հայտարարատու պաշտոնատար անձանց, այդ թվում՝ «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով նախատեսված՝ կուսակցությունների ղեկավար մարմինների պաշտոնատար անձանց և հայտարարագրերի, ինչպես նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների նվերների հաշվառման ռեեստրները.

Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.5 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.6 Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են պետության անվտանգության ապահովման, կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝

կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Վարչական վարույթի ընթացքում ծանուցումներն ուղարկվում են փոստային առաքմամբ կամ հանձնվում են առձեռն, իսկ սույն հոդվածով նախատեսված դեպքերում ուղարկվում են էլեկտրոնային փոստի հասցեով կամ հաղորդակցության այլ միջոցներով:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ Ծանուցումները փոստային առաքմամբ ուղարկվելու դեպքում վարչական վարույթին կցվում է հասցեատիրոջն ուղարկվելու մասին ապացույցը, իսկ պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում՝ նաև հասցեատիրոջ կողմից ստացման վերաբերյալ ապացույցը:

4.8 Օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

4.9 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.10 Օրենսգրքի 244.22-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 189.10-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում պետական մարմինը կամ պաշտոնատար անձը, որին համապատասխան տեղեկությունը (տվյալը) պետք է տրամադրվի:

4.11 Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.12 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 189.10-րդ հոդվածով նախատեսված դրույթը՝ նպատակ է հետապնդում ապահովել կուսակցության ղեկավար մարմնում հայտարարատու պաշտոնատար անձի հաշվետվողականությունը, կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Անդրադառնալով օրենսդրի կողմից նախանշված՝ հայտարարատու պաշտոնատար անձի հաշվետվողականության ապահովման, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության ապահովման նպատակին, Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն դեպքում հաստատված փաստ է այն, որ ինչպես օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, այնպես էլ մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ավարտը Կուսակցության կողմից պահանջվող տեղեկությունները սահմանված ժամկետում Հանձնաժողովին չի ներկայացվել, ուստի չի ապահովվել Կուսակցության ղեկավար մարմնի հայտարարատու պաշտոնատար անձանց հաշվետվողականության օրենսդրի նպատակը:

Միաժամանակ, նշվածով պայմանավորված՝ չի ապահովվել նաև օրենսդրի կողմից նախանշված՝ Կուսակցության կողմից կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության վերահսկողության նպատակը, քանի որ, ըստ էության, Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց տվյալների բացակայության պայմաններում հնարավոր չի լինում

ապահովել Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների կողմից պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրերը ներկայացնելու գործընթացի կազմակերպումը:

Անդրադառնալով Միեր Տերտերյանի այն դիրքորոշմանը, որ Կուսակցության խորհրդը և խորհրդի անդամները 2021 թվականի տարեվերջից փաստացի գործունեության չեն իրականացրել՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ տվյալ փաստարկը չի կարող հիմք հանդիսանալ համապատասխան տվյալները Հանձնաժողով չներկայացնելու համար, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործի քննության ընթացքում Կուսակցության նախագահը նշեց, որ Կուսակցությունը լուծարելու նպատակ առկա չէ: Կուսակցության նախագահի կողմից ներկայացված այն փաստարկի կապակցությամբ, համաձայն որի՝ Կուսակցության խորհրդի անդամները տարբեր ժամանակներում դիմումներ են ներկայացրել խորհրդի անդամությունը դադարեցնելու մասին, Հանձնաժողովն արձանագրում է, որ դա նույնպես հիմք չէ նրանց վերաբերյալ տվյալները Հանաձնաժողով չներկայացնելու համար, քանի որ այդ դիմումների՝ սահմանված կարգով գրանցված լինելու և դրանց ընթացք տալու վերաբերյալ որևէ վերաբերելի ապացույց չի ներկայացվել Հանձնաժողով հետևաբար Հանձնաժողովը հիմք է ընդունել նշված անձանց վերաբերյալ պետական լիազոր մարմնում պետական գրանցում ստացած տվյալները, ըստ որոնց՝ այդ անձինք շարունակում են հանդիսանալ Կուսակցության Խորհրդի անդամ, հետևաբար նաև հայտարարատու անձ: Ընդ որում, Հանձնաժողովը որոշում կայացնելիս հաշվի է առնում նաև այն, որ Կուսակցության նախագահը նույնիսկ իր վերաբերյալ տվյալները գործի քննության օրվա դրությամբ չի ներկայացրել Հանձնաժողով:

Ամփոփելով ամբողջ վերոնշյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ «Միասնական Հայրենիք» կուսակցության նախագահ Միեր Տերտերյանի կողմից թույլ է տրվել Օրենսգրքի 189.10-րդ հոդվածի խախտում, այն է՝ Պետական մարմնին (պաշտոնատար անձին) իր օրինական գործունեության համար անհրաժեշտ օրենքով նախատեսված տեղեկությունը սահմանված ժամկետում չի տրամադրվել Հանձնաժողովին:

Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ:

Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ Միեր Տերտերյանը 2019 թվականի սեպտեմբերի 22-ից հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավարը՝ նախագահը, ինչով պայմանավորված հանդիսանում է նաև պահանջվող տեղեկությունները Հանձնաժողով ներկայացնելու պարտականություն կրող պաշտոնատար անձ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Միեր Տերտերյանը՝ որպես Օրենսգրքի 14-րդ հոդվածով նախատեսված կուսակցության պաշտոնատար անձ, ենթակա է պատասխանատվության Օրենսգրքի 189.10-րդ հոդվածով սահմանված արարքի համար:

Օրենսգրքի 189.10-րդ հոդվածով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 189.10-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կուսակցության նախագահ Միեր Տերտերյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ ***100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:***

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մեր Տերտերյային այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ